ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27 - Ի «ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԸՆՏՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 36-Ա ՈՐՈՇՈՒՄԻՑ (ՆԻՍՏ N 3)

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1- ին մասի 14-րդ կետը, 11-րդ հոդվածը, 13-րդ հոդվածի 10-րդ մասը, հաշվի առնելով Գավառ համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողովի «21» փետրվարի 2025թ-ի արձանագրությունը՝ ***Գավառ համայնքի ավագանին որոշում է***

1. Հավանություն տալ մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ Գավառ համայնքի բնակիչների կողմից 2025 թվականին ներկայացրած և քվեարկության արդյունքում ընտրված առաջարկներին՝ համաձայն հավելված 1-ի:
2. Առաջարկներն իրականացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվային ակտերի պահանջներին համապատասխան:
3. Առաջարկներն իրականացնելուց հետո ամփոփ հաշվետվություն ներկայացնել ավագանուն:
4. Գավառ համայնքի 30 դեկտեմբերի 2024 թվականի N 371-Ա որոշման «Գավառ համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով գումար հատկացնելու մասին» առաջին կետում նախատեսված 10.000.000 ՀՀ դրամը փոփոխել և սահմանել 11.000.000 ՀՀ դրամ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ